ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով տալիս եմ իմ անվերապահ համաձայնությունը՝ «ԱԴԻ Բանկ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ «Հաճախորդի իրավունքներ» բաժնում հրապարակված «Անձնական տվյալների մշակման, տեղեկատվության հավաքագրման, օգտագործման և փոխանցման, ինչպես նաև իրավասու այլ պետական և ոչ պետական մարմիններից, կազմակերպություններից հարցումներ կատարելու վերաբերյալ» հրապարակային համաձայնության (այսուհետ նաև՝ Համաձայնություն) տեքստին՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ) ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ/ԿԱՄ ՔԱՐՏԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ/ԿԱՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ՊԱՀԱՏԵՂԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԻ անհրաժեշտ տվյալների մշակման մասով:

Գիտակցում եմ, որ տալով սույն համաձայնությունը, մինչև իմ՝ Բանկի հետ գործարար իրավահարաբերության մեջ մտնելը և այդ իրավահարաբերության ընթացքում (այդ թվում՝ իրավաբանական անձին մատուցվող ծառայության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ նրա հետ փոխկապակցված համարվելու դեպքում) վերոնշյալ ծառայությունից օգտվելու համար նույնականացնելու, որոշումներ ընդունելու, կարծիք ձևավորելու, իրավունքներ ձեռք բերելու կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելու կամ իրավունքները սահմանափակելու կամ զրկելու նպատակներով (ընդ որում՝ անձի վերաբերյալ տեղեկությունները Բանկը կարող է հավաքագրել իրավաչափ ցանկացած եղանակով, ինչպես անմիջապես իրենից, այնպես էլ՝ օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներից) **մշակել, այդ թվում՝ հավաքագրել, ամրագրել, մուտքագրել, համակարգել, կազմակերպել, պահպանել, վերափոխել, վերականգնել, փոխանցել (Բանկի հետ համագործակցության կամ քաղաքացիական այլ պայմանագրերի հիման վրա ծառայություններ մատուցող անձանց կամ կազմակերպություններին (այդ թվում՝ օտարերկրյա), ՀՀ և օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններին, որոնք Բանկի հետ կնքել են գաղտնիության պահպանման համաձայնություններ կամ նման պարտավորություն ունեն օրենքի ուժով), ուղղել, ուղեփակել, ոչնչացնել, օգտագործել**, ինչպես նաև՝ մեկից ավելի անգամ **դիմել, կատարել հարցումներ** ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, այդ թվում՝ **ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը, ՀՀ ոստիկանությանը, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությանը, ՀՀ հարկադիր կատարման ծառայությանը, ՀՀ կադաստրի կոմիտեին, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը, ՀՀ Կենտրոնական բանկին, ինչպես նաև՝ տվյալներ մշակող ցանկացած մարմնի/անձի, այդ թվում՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մարմնին/անձին,** իմ վերաբերյալ **ստանալ, ինչպես նաև տրամադրել** վերոնշյալ ծառայության/ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ (այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված և պաշտպանվող)՝ Համաձայնության մեջ նշված տվյալները:

Սույն համաձայնությունը տրված է համարվում այն որևէ եղականով ստորագրելու կամ Բանկի առցանց համակարգում կամ բջջային հավելվածում (online banking կամ mobile banking) համապատասխան նշում կատարելու պահից: